

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԸ

Հարկային համակարգը համարվում է կարևորագույն գործիք պետության տնտեսական քաղաքականության իրականացման և շուկայական հարաբերությունների կարգավորման համար: Յուրաքանչյուր երկիր ունի իր ուրույն հարկային համակարգը, որը տարբերվում է մյուսներից: Դա մեծամասամբ պայմանավորված է ավանդույթներով, որոնք իրենց հետքն են թողնում տնտեսական հարաբերությունների որակական և քանակական նկարագրի վրա, ինչպես նաև պայմանավորված է կոնկրետ սոցիալ-տնտեսական իրավիճակով և այլ խնդիրների համապատասխանությամբ, որը հարկային համակարգը կոչված է լուծելու այս կամ այն ժամանակահատվածի ընթացքում: Սակայն, միևնույն ժամանակ, հարկային համակարգերն ունեն նաև ընդհանուր գծեր, որոնք բնորոշ են բոլոր երկրներին¹:

Ձարգացած կապիտալիստական երկրներում գնալով մեծանում է պետության դերը շուկայական գործընթացներում: Պետությունը հանդես է գալիս թե՛ որպես շուկայական հարաբերությունները կարգավորող մարմին և թե՛ որպես շուկայի մասնակից: Տարբեր է միայն պետության՝ շուկայական հարաբերություններին միջամտելու չափը: Պետական կարգավորման համար ձեռնարկությունների և անհատ ձեռնարկատերերի վրա ազդելու հիմնական գործիք է հարկային քաղաքականությունը²:

Յուրաքանչյուր երկրում հարկային համակարգը ձևավորվում է տարբեր տնտեսական գործոնների, քաղաքական և սոցիալական պայմանների, հարկման սկզբունքների և կառուցվածքի, տարբեր մակարդակի իշխանությունների ֆիսկալային լիազորությունների, հարկման բազայի, հարկային արտոնությունների ազդեցությամբ՝ տարբերվելով այլ երկրների հարկային համակարգերից³:

Հարկային համակարգի ձևավորման գործում հիմնվում են տարբեր չափորոշիչների վրա, որոնցից կարևորվում են հարկերի հիմնական ֆունկցիոնալ նշանակությունը, հարկերի պրոգրեսիվությունը և ռեգրեսիվությունը, հարկման ձևերը, հարկային արտոնությունների մեխանիզմը, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության որոշումը և հարկերի հավաքագրման աստիճանը հարկման գործընթացում⁴:

Հարկային համակարգը հասարակական արդյունքի նրա կառուցվածքի, դիմամիկայի, գիտատեխնիկական առաջընթացի վրա ներգործության տնտեսական միջոց է: Հարկերը իրականացնում են տնտեսական ու սոցիալական զարգացման, ինչպես նաև արտադրատնտեսական կապերի կարգավորման գործառույթ:

Չնայած հարկադրումների բազմազանությանը՝ զարգացած երկրների կառավարությունները ձգտում են հարկերի նվազեցման, իսկ ավելի ճիշտ դրանց, այսպես կոչված, լավարկման՝ հարկային օրենսդրության բարելավման, տարբեր հարկերի համախմբման, հարկային գործընթացի պարզեցման միջոցով:

Ավելի լավ պատկերացում կազմելու համար քննարկենք զարգացած որոշ երկրներում ձևավորված հարկային համակարգերի առանձնահատկությունները:

¹ Буланова А., «Налоговые гавани и оффшорные центры Европы», Внешняя торговля, 1992, № 11-12, стр. 13-16.

² НАЛОГИ: Учебное пособие, Под. ред. Д. Г. Черника, 4-е издание, перераб. и доп. — М.: Финансы и статистика, 2001, стр. 213.

³ Нлоговые системы стран дальнего и ближнего зарубежья: /Мыровой опыт/, Вестник ВХС, РБ, 2005, №9 стр. 73.

⁴ Нлоговые системы стран дальнего и ближнего зарубежья: /Мыровой опыт/, Вестник ВХС, РБ, 2005, №9 стр. 74-75.

ՖԻՆԱՆՍԱՆ: Ֆրանսիայի հարկային հասակարգը մյուս զարգացած կապիտալիստական երկրների հարկային համակարգերից տարբերվում է պարտադիր վճարների մեծ տեսակար կշռով (հիմնականում սոցիալական ապահովության և ապահովագրության հիմնադրամներ կատարվող) և ուղղակի հարկերի նկատմամբ անուղղակի հարկերի գերակայությամբ: Պարտադիր վճարների տեսակարար կշռի մեծությամբ Ֆրանսիան ոչ միայն առաջին է Եվրամիության անդամ երկրների շարքում, այլ նաև զարգացած երկրների շարքում:

Ֆրանսիայում ընդամենը հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը գրեթե չի փոփոխվել 1995-2005 թթ. ընթացքում՝ պահպանելով 40-41% բարձր ցուցանիշը, որում մամանտիպ ցուցանիշներ է արձանագրվել 1995 և 2005 թթ. սոցիալական հատկացումների գծով՝ 12.6%, որը 1995 թ. կազմում է ընդամենը հարկերի 31.5%-ը, իսկ 2005 թ.՝ 31%-ը: Ուստի, կարելի է փաստել, որ սոցիալական հատկացումները Ֆրանսիայի ապակենտրոնացված հիմնադրամներում ապահովում են կայուն եկամուտներ և աճում են ՀՆԱ-ի աճին զուգընթաց: Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ վերջին տարիներին պետական բյուջեում գնալով աճում է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կենտրոնացնելով ՀՆԱ-ի 14%-ից ավելին: 1995 թ. անուղղակի հարկերը կազմում են բյուջեի հարկային մուտքերի 45.2%-ը, իսկ արդեն 2005-ին՝ 51.7%-ը:

1995թ. դրությամբ ԱԱՀ-ն ապահովում էր անուղղակի հարկերի 44.3%-ը, իսկ ամբողջ հարկային մուտքերում այն կազմում էր 20%: 2005 թ. ԱԱՀ-ն ապահովում էր անուղղակի հարկերի 41.3%-ը, իսկ ամբողջ հարկային մուտքերում այն կազմում էր 21.4%: Ամենաբարձր ցուցանիշը 1995-2005 թթ. ընթացքում եղել է 2000 և 2001 թթ.՝ անուղղակի հարկերում կազմելով համապատասխանաբար 42.7% և 42.8%, իսկ ամբողջ հարկային մուտքերում կազմելով համապատասխանաբար 21.8% և 21.3%: Ինչպես երևում է 1-4 աղյուսակներից անուղղակի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 1995-2005 թթ. ընթացքում աճել է 12.4%-ից 14.5%, իսկ այդ ժամանակահատվածում ուղղակի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը դրսևորել է նվազման միտում՝ 15%-ից իջնելով 13.5%-ի: Հետաքրքիր է այն փաստը, որ 1995-2005 թթ. ընթացքում ուղղակի հարկերի նվազման եկամտահարկը պահպանել է գրեթե կայուն ցուցանիշ ամբողջ հարկային մուտքերում՝ 1995թ. դրսևորելով 69.3% ուղղակի հարկերում և 37.9% ամբողջ հարկային մուտքերում, իսկ 2005թ.՝ 77% ուղղակի հարկերում և 37.1% ամբողջ հարկային մուտքերում: Եկամտահարկի գծով ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են 1998 և 1999 թվականների ընթացքում՝ ուղղակի հարկերում կազմելով համապատասխանաբար 76.7% և 75.3%, իսկ ամբողջ հարկային մուտքերում կազմելով 37% և 37.2%: Պետք է նկատել, որ եկամտահարկը ամենաբարձր հարկային մուտքեր ապահովող հարկատեսակն է:

Շահութահարկը 1995-2005թթ. ընթացքում ընդհանուր առմամբ դրսևորել է նվազման միտում: 1995թ. այն կազմել է ուղղակի հարկերի 22%-ը, իսկ ամբողջ հարկային մուտքերում՝ 12%: 2005թ. շահութահարկը ուղղակի հարկերում կազմել է 17%, իսկ ամբողջ հարկային մուտքերում՝ 8.2%: Շահութահարկի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 1997թ.՝ ուղղակի հարկերում կազմելով 24.8%, իսկ ամբողջ հարկային մուտքերում՝ 14%:

1970-ական թթ. Ֆրանսիայի կառավարությունը վարում էր տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման բարձրացման ուղղված քաղաքականություն: Այս քաղաքականությունը կառուցվում էր տեղական մարմիններում ինքնաֆինանսավորվող և առանց դեֆիցիտի տեղական բյուջեների ձևավորման սկզբունքի վրա: Սակայն միևնույն ժամանակ տեղական և կենտրոնական բյուջեներ կատարվող հարկային մուտքերի գանձումը իրականացվում է միևնույն հարկային մարմնի կողմից: Այս քաղաքականության արդյունքում տեղական բյուջեներ մուտքագրվող հարկերը կազմեցին ընդհանուր հարկային մուտքերի 1/3-ից քիչ ավելին¹:

¹ Мещерякова О.В., Налоговые системы развитых стран мира, справочник, Москва: Фонд "Правовая культура", 1995, стр. 103.

Մյուս կողմից անհրաժեշտ է նկատել, որ եթե 1995 թ. դրությամբ հարկային մուտքերի շուրջ 60% էր հավաքագրվում կենտրոնական բյուջեում, ապա 2005 թ. այն նվազեց և կազմեց հարկային մուտքերի 53.2%-ը, իսկ ի հակադրություն դրա աճել են տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների հարկային մուտքերը: Եթե 1995 թ. տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների հարկային մուտքերը կազմում էին ընդամենը հարկերի 7.7%-ը, ապա 2005 թ. այդ ցուցանիշը կազմում էր 15.7%: Այսպիսով, 10 տարվա ընթացքում ՀՆԱ-ի աճին զուգընթաց տեղական բյուջեներ հարկային մուտքերն ունեցան ոչ միայն քանակական, այլև որակական աճ:

Հիմնական տեղական հարկերից են տուրիստական վճարները, մասնագիտական հարկը, կոմունալ վճարները, կոմունիկացիաներից օգտվելու վճարները և անշարժ գույքից գանձվող որոշ վճարներ¹:

Ֆրանսիայի հարկային համակարգում գործող հարկերը շատ կայուն են, տարիներ շարունակ փոփոխության են ենթարկվում միայն խիստ անհրաժեշտության դեպքում, և ամբողջ համակարգում հարկերը փոխկապակցված են, որով էլ իրականացվում է կրկնակի գանձումից խուսափելու մեխանիզմը²:

Ֆրանսիայում եկամտահարկն ապահովում է կենտրոնական բյուջեի հարկային եկամուտների շուրջ 20%-ը, իսկ նրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ որպես ֆիսկալային միավոր է ընտրված ոչ թե եկամուտներ ստացող անհատը, այլ անհատ ընտանիքը³:

Ֆրանսիայի հարկային համակարգում յուրօրինակ հարկատեսակ է գույքային գործառնություններից հարկը, որի հարկման բազան անշարժ գույքի հետ կապված տնտեսական գործունեությունից ստացված «սովորականից բարձր եկամուտներն են»:

Այս հարկը տարածվում է.

- ա) բնակարանաշինությունից և այլ շինարարական աշխատանքներում ստեղծված նոր անշարժ գույքի վաճառքից ստացված եկամուտների վրա,
- բ) անշարժ գույքի տնօրինումից ստացված եկամուտների վրա
- գ) սեփականության իրավունքով պատկանող հողակտորը շինարարական նպատակներով շուկայականից բարձր գնով վաճառելուց ստացված եկամուտների վրա՝ միջին շուկայական գինը գերազանցող մասի չափով:

Ֆրանսիայի ամենափին հարկատեսակներից է համարվում «Ժառանգության և նվիրատվության հարկը»: Այն ներդրվել է դեռևս 1798թ. և բազմաթիվ փոփոխություններով հանդերձ՝ գործում է մինչև օրս: Այս հարկատեսակով չեն հարկվում ամուսինները՝ ամուսիններից մեկի մահվան դեպքում մյուսին ժառանգության իրավունքով անցած գույքի, դրամական միջոցների և այլ կապիտալի մասով, ինչպես նաև «ուղիղ գծով» ժառանգներին անցած գույքը, դրամական միջոցները և այլ կապիտալը: Ուղիղ գծով ժառանգություն է համարվում հորից, մորից որդուն կամ դստերն անցած ժառանգությունը⁴:

Ֆրանսիայում գոյություն ունի ԱԱՀ-ի 5 տեսակի դրույքաչափ, որոնք խմբավորվում են 3 կատեգորիաներում՝ ԱԱՀ-ի իջեցված դրույքաչափ՝ 2.1%, 4%, 5.5%, ստանդարտ՝ 18.6%, բարձրացված 22%: Հատկանշական է, որ ԱԱՀ-ը առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում 1954թ.: Կիրառելով տարբեր դրույքաչափեր առանձին ապրանքատեսակների և ծառայությունների համար, միևնույն ժամանակ բավականին բարդ է ԱԱՀ-ի հարկման բազայի հաշվարկման մեթոդաբանությունը: ԱԱՀ-ի հարկման բազայի որոշումը իրականացնում են հարկատուները: Փոքր ապրանքաշրջանառության ծավալներ ունեցող հարկատուները ԱԱՀ-ի հաշվետվությունը

¹ Нлоговые системы стран дальнего и ближнего зарубежья: /Мировой опыт/, Вестник ВХС, РБ, 2005, №9 стр. 81

² www.bashnalog.ru/nalogzapad.htm/

³ Мещерякова О.В., Налоговые системы развитых стран мира, справочник, Москва: Фонд "Правовая культура", 1995, стр. 103-104.

⁴ Русакова И. Г., В. А. Раевский, Налоги в развитых странах, Москва, 1991, "Финансы и статистика", стр. 244.

ներկայացնում են ըստ հաշվետու տարվա, իսկ մեծ ապրանքաշրջանառության ծավալներ ունեցողները՝ ըստ հաշվետու ամսվա¹:

Ֆրանսիայի հարկային համակարգում ակցիզահարկ օգտագործվում է ոչ միայն ենթակառուցվածքային ապրանքների նկատմամբ, այլ մաս որոշակի ապրանքատեսակների և ծառայությունների համար, որոնք գանձվում են տեղական բյուջեներ՝ սակայն միևնույն հարկային մարմնի կողմից²:

2003 թ. ընդամենը հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում էր 41.3%-ը՝ և Ֆրանսիան այս ցուցանիշով եվրոպական երկրների շարքում զբաղում էր 9-րդ տեղը:

Ֆրանսիայի հարկային օրենսդրությունը մախատեսում է հաշվարկված հարկերը ժամանակին չմուծելու դեպքում յուրաքանչյուր ուշացած ամսվա համար հարկի գումարի 0.75%-ի չափով տույժ, իսկ հարկման բազան պակաս ցույց տալու կամ հաշվարկված հարկերը թաքցնելու դեպքում մախատեսում է թաքցված հարկի գումարի բռնագանձում և տուգանք թաքցված հարկի գումարի 10%-ի չափով:

Հարկային համակարգը Ֆրանսիայում ունի առանձնահատկություններ և ավանդույթներ, որոնք սերտ կապված են տնտեսական և քաղաքական համակարգի զարգացման հետ: Ֆրանսիայի հարկային համակարգը հենված է օրենսդրական մեծ բազայի վրա, որը նշանակում է, որ հարկային համակարգի բարեփոխումների և արդյունավետ գործունեության բոլոր իրավասությունները պատկանում են Ֆրանսիայի Պառլամենտին: Հարկային բարեփոխումները կատարվում են գրեթե յուրաքանչյուր տարի, և հատկանշական է այն, որ հարկային բարեփոխումների փաթեթը միշտ քննարկվում է հաջորդ տարվա բյուջեի քննարկումների հետ համատեղ³:

Մեծ Բրիտանիա: Մեծ Բրիտանիայի հարկային համակարգը թերևս կարելի է համարել աշխարհի հնագույն շուկայավարման հարկային համակարգերից մեկը: Մեծ Բրիտանիայում գործող հարկերը գանձվում են դեպի կենտրոնական բյուջե և տեղական բյուջեներ: Կենտրոնական բյուջե գանձվող ուղղակի հարկերից են ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկը, շահութահարկը (կորպորատիվ հարկ), մավթից և մավթամթերքներից գանձվող հարկը, ժառանգության հարկը և այլն: Իսկ անուղղակի հարկերից առավել մեծ մասնաբաժին են ապահովում ԱԱՀ-ը, ակցիզային հարկը և պետական տուրքը: Տեղական բյուջե գանձվող հարկ է գույքահարկը⁴: Ամերիաժեշտ է նկատել, որ Մեծ Բրիտանիայում գործող հարկատեսակներն իրենց բովանդակությամբ և կենտրոնացվածությամբ մնան են ՀՀ-ում գործող հարկատեսակների:

Հիմնական հարկերից մեկը, որը ունի շատ հին պատմություն, ֆիզիկական անձանցից գանձվող հարկն է: Մեծ Բրիտանիայում եկամտահարկի գանձումն իրականացվում է այսպես կոչված շեդուլային (schedule- թարգմանաբար նշանակում է գրաֆիկ, ցուցակ) եղանակով: Գործում է 6 շեդուլ, ըստ որոնց աստիճանավորվում են եկամուտները:

Շեդուլ A – ներառում է ունեցվածքից ստացված եկամուտները, այդ թվում՝ հողակտորի, շինության, կառույցի տնօրինումից, վարձակալումից ստացված եկամուտները, վարձով տրված բնակարանների և առանձնատների վարձավճարները:

Շեդուլ B – ներառում է անտառային զանգվածի կոմերցիոն օգտագործումից ստացված եկամուտները, եթե դրանք չեն հարկվում շեդուլ D-ով:

Շեդուլ C – ներառում է պետական պարտատոմսերից, ֆինանսների մախարարության, գանձապետական պահառուի այլ պետական պարտատոմսերից, ինչպես մաս տեղական ինքնակառավարման մարմինների պարտատոմսերից ստացված եկամուտները:

¹ Банхаев Ф.Е., Сравнительный анализ налоговых систем и его значение для совершенствования и реформирования налогового законодательства, Налоговый вестник, 2001, №3, стр. 96-97.

² Projet de loi des finances pour 1992.Paris.

³ www.taxing.ac.uk

⁴ Нлоговые системы стран дальнего и ближнего зарубежья: /Мировой опыт/, Вестник ВХС, РБ, 2005, №9 стр. 80.

Շերտ D – ներառում է առևտրային, արտադրական, տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները: Այս շերտը իր հերթին բաժանվում է հետևյալ ենթախմբերի.

- առևտրային կամ գործնական գործառնություններից(բիզնեսից) ստացված եկամուտներ
- մասնագիտական ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ(բժիշկներ, փաստաբաններ և այլն)
- հարկման ենթակա տոկոսներ և ալիմենտներ(ապրուստավճար)
- արտասահմանում գտնվող արժեթղթերից ստացված եկամուտներ
- արտասահմանում գտնվող ունեցվածքից ստացված եկամուտներ
- չթվարկված մնացած բոլոր եկամուտները (օրինակ՝ հոնորար)¹

Շերտ E – ներառում է աշխատավարձից(այդ թվում պետական ծառայողների աշխատավարձ, հարկման ենթակա թոշակներ) ստացված եկամուտներ:

Շերտ F – ներառում է Մեծ Բրիտանիայի ընկերությունների կողմից իրականացրած այլ վճարումներ:

Եկամտահարկի նվազագույն դրույքաչափը 10% է, հիմնականը՝ 23%, իսկ առավելագույնը՝ 40%-ը: 40% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ տարեկան կտրվածքով եկամուտները գերազանցում են 28'000 ֆունտ սթեռլինգը²:

Օրենսդրությունը սահմանում է մի շարք արտոնություններ եկամտահարկի գծով: Մասնավորապես հարկման ենթակա չեն կրթաթոշակները, սոցիալական նպաստները և այլն: Եկամտահարկից ազատված են բարեգործական կազմակերպությունները, պայմանով, որ եկամտահարկի գումարը կծառայի բարեգործական նպատակներին: Ֆիզիկական անձինք իրավունք ունեն նվազեցումներ կատարել հարկվող եկամտի գումարից 4745 ֆունտ ստեռլինգի չափով³:

Մեծ Բրիտանիայում ընկերություններից շահութահարկի դրույքաչափը վերջին 10 տարիների ընթացքում նվազել է. սկզբում 52%-ից իջեցվեց 35%, այնուհետև 30%: Փոքր բիզնեսին արտոնություն է տրվում՝ շահութահարկի դրույքաչափը սահմանելով 25%: Ձեռնարկությունը փոքր, միջին կամ խոշորին դասելու չափանիշը ոչ թե աշխատողների քանակն է, ինչպես Հայաստանում, այլ ստացված շահույթը: Փոքր են այն ձեռնարկությունները, որոնց տարեկան շահույթը 250'000 ֆունտ սթեռլինգից չի անցնում⁴:

1999 թվականից Մեծ Բրիտանիայում ներդրվեց հարկերի վճարման նոր համակարգ: Այդ համակարգի համաձայն՝ 20 խոշորագույն ձեռնարկություններ այսուհետև սկսեցին շահութահարկ վճարել յուրաքանչյուր եռամսյակ, իսկ շահութահարկի գծով կանխավճարների մոծումը վերացվեց: Ներդրվեց հարկատուների ինքնագնահատման համակարգ՝ ինչպես ձեռնարկությունների, այնպես էլ ֆիզիկական անձանց համար:

Մեծ Բրիտանիայի հարկային համակարգում կարևոր նշանակություն ունի մաս ԱԱՀ-ը: Ինչպես հայտնի է, ԱԱՀ-ի ծանրության կրողները ապրանքների ու ծառայությունների վերջնական սպառողներն են: Մեծ Բրիտանիայում այն սահմանված է 17.5%, և ԱԱՀ վճարող են բոլոր այն տնտեսավարողները, ովքեր օրացույցային տարում ունեն 52'000 ֆունտ սթեռլինգից ավելի շրջանառություն: Սակայն Մեծ Բրիտանիայի ԱԱՀ-ի վերաբերյալ օրենսդրությունը արտոնություն է սահմանում սննդամթերքի և տպագրական արտադրանքի վաճառքի, առողջապահական, կրթական և ապահովագրական ծառայությունների մատուցման դեպքերում⁵:

¹ Օհանջանյան Սերժ, Աղաջանյան Լևիկ, «Հարկեր և Հարկավորում», Ուս. ձեռնարկ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՊՃՀ, Խմբ. Ն. Խաչատրյան, 2006, էջ 144:

² Пансков В. Г., Князев В. Г. «Налоги и налогообложения» Учебное пособие для вузов, М.: МЦФЭР, 2003, стр. 168.

³ Левицкая Е., Особенности налоговой системы Великобритании, Вестник по налогам и сборам РБ, 2005, № 27, стр. 91-93.

⁴ Օհանջանյան Սերժ, Աղաջանյան Լևիկ, «Հարկեր և Հարկավորում», Ուս. ձեռնարկ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՊՃՀ, Խմբ. Ն. Խաչատրյան, 2006, էջ 145:

⁵ Пансков В. Г., Князев В. Г. «Налоги и налогообложения» Учебное пособие для вузов, М.: МЦФЭР, 2003, стр. 170.

Մեծ Բրիտանիայի հնագույն հարկատեսակներից է նաև պետական տուրքը: Պետական տուրքը Մեծ Բրիտանիայում գանձվում է տարբեր տիպի գործառնությունների փաստաթղթավորման և պետական գրանցման դեպքերում: Սակայն Մեծ Բրիտանիայում, ի տարբերություն այլ երկրների, պետական տուրքը ավելի շատ ունի ֆիսկալային նշանակություն և ոչ թե համապատասխան գործարքների պետական գրանցման «զմի» նշանակություն: Այսպես սահմանված մի որոշակի, շատ փոքր գումար մինչև 60'000 ֆունտ սթեռլինգը գերազանցող գործարքների պետական գրանցման համար, որը Մեծ Բրիտանիայի տարբեր վարչատարածքներում տարբեր է: Այն գործարքները, որոնց արժեքը 60'000-250'000 ֆունտ սթեռլինգ է, դրանց համար սահմանվում է գործարքի գնի 1%-ը, 250'000-500'000 ֆունտ սթեռլինգի դեպքում գանձվում է գործարքի գնի 3 տոկոսը, իսկ 500'000 ֆունտ սթեռլինգը գերազանցող գործարքների համար սահմանված է գործարքի գնի 4%-ը¹: Ինչպես երևում է, պետական տուրքը ունի պրոգրեսիվ դրույքաչափ՝ կախված գործարքի գնից, մինչդեռ այլ երկրներում պետական տուրքը ունի հաստատագրված վճարի տեսք՝ կախված գործարքի տեսակից: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ պետական տուրքի համար սահմանված դրույքաչափերի սանդղակը կիրառվում է անշարժ գույքի և արժեթղթերի հետ կապված գործարքների իրականացման ժամանակ:

Մեծ Բրիտանիայում գործում է ժառանգության և նվիրատվության հարկը: Ժառանգության հարկի նվազագույն շեմը սահմանված է 262'000 ֆունտ սթեռլինգ, որը ամեն տարի վերանայվում է ինֆլյացիայի հետ կապված²:

Այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք Մեծ Բրիտանիայում հարկերի կազմի ու կառուցվածքի հետ կապված որոշակի տվյալներ 1995-2005 թթ. ընթացքում:

Մեծ Բրիտանիայում հարկերի միջոցով վերաբաշխվում է ՀՆԱ-ի 35-37 տոկոսը: 1995թ. անուղղակի հարկերը կազմում էին ամբողջ հարկային մուտքերի 47.9%-ը, այդ թվում՝ 22.7% ԱԱՀ և 13.9% ակցիզային հարկ, իսկ միայն անուղղակի հարկերի կազմում ԱԱՀ-ն կազմում է 47.5%, իսկ ակցիզային հարկը՝ 29%:

2005թ. դրությամբ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 44.1%, իսկ ուղղակի հարկերինը բարձրացել՝ կազմելով արդեն 55.9%: Անուղղակի հարկերի կազմում ԱԱՀ-ը 2005թ. ապահովում էր անուղղակի հարկերի 51.1%-ը, իսկ ամբողջ հարկային մուտքերում՝ 22.5%-ը: Փաստորեն չնայած անուղղակի հարկերի տեսակարար կշռի նվազման ԱԱՀ-ից մուտքերը ամբողջ հարկային մուտքերում գրեթե չեն նվազել՝ 1995 թ. ապահովելով հարկային մուտքերի 22.7%-ը, իսկ 2005-ին՝ 22.5%-ը:

Ուղղակի հարկերում գերակշիռ դեր ունի եկամտահարկը, որը 1995 թ. դրությամբ ապահովում է ուղղակի հարկերի 67.3%-ը, իսկ ամբողջ հարկային մուտքերի մեջ այն ապահովում է 35%-ը, իսկ 2005 թ. դրությամբ եկամտահարկը կազմում է ուղղակի հարկերի 62.5%-ը, իսկ ամբողջ հարկային մուտքերում՝ 34.8%-ը:

Ինչպես երևում է աղյուսակից եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 1995-2005 թթ. ընթացքում ամենաբարձրն է եղել 2000 և 2001 թթ.՝ կազմելով համապատասխանաբար 10.8% և 10.9%:

Մեծ Բրիտանիայում շահութահարկից մուտքերը մեծ չեն: 1995 թ. դրությամբ շահութահարկից մուտքերը ամբողջ հարկային մուտքերում կազմում են 9.5%, իսկ ուղղակի հարկերում՝ 18.3%: 2005 թ. նույն ցուցանիշը աճման միտում է դրսևորել՝ կազմելով ամբողջ հարկային մուտքերում 10.9%, իսկ ուղղակի հարկերում՝ 19.6%: 1995-2005 թթ. ընթացքում ամենաբարձր ցուցանիշը ապահովել է 1997 և 1998 թթ.՝ ամբողջ հարկային մուտքերի համապատասխանաբար 13.2%-ը և 12.4%-ը, իսկ ուղղակի հարկերում կազմելով համապատասխանաբար 25.7% և 22.7%:

¹ Левицкая Е., Особенности налоговой системы Великобритании, Вестник по налогам и сборам РБ, 2005, № 27, стр. 93.

² Левицкая Е., Особенности налоговой системы Великобритании, Вестник по налогам и сборам РБ, 2005, № 27, стр. 93.

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ 1995 թ. դրությամբ ամբողջ հարկային և ոչ հարկային մուտքերի 93.5%-ը հավաքագրվում է Մեծ Բրիտանիայի կենտրոնական բյուջեում, և միայն 3.6%-ն է հավաքագրվում տեղական բյուջեներում, իսկ հարկային և ոչ հարկային մուտքերի 2.8%-ը Մեծ Բրիտանիայի կողմից տրամադրվում է Եվրամիության կառույցներին: 2005 թ. դրությամբ Մեծ Բրիտանիայի կենտրոնական բյուջեում հավաքագրվում է ամբողջ հարկային մուտքերի 94%-ը, տեղական բյուջեներում՝ 4.5%-ը, իսկ Եվրամիության կառույցներին տրամադրվում է հարկային մուտքերի 0.8%-ը: Ուստի կարելի է փաստել, որ 1995 թ. դրությամբ կենտրոնական և տեղական բյուջեների հարակյին և ոչ հարկային մուտքերի աճը տեղի է ունեցել Եվրամիությանը տրամադրվող միջոցների կրճատման հաշվին:

ԳԵՐՄԱՆԻԱ: Գերմանիայի բյուջետային համակարգը մինչև Գերմանիայի միավորվելը կազմված էր 2 հատուկ հիմնադրամներից՝ միավորված պետական բյուջեից, 11 երկրային բյուջեներից, 8500 համայնքային բյուջեներից և 1000 միավորված համայնքային բյուջեներից¹: Միավորվելուց հետո Գերմանիայի վարչատարածքային միավորների թիվը դարձավ 16, իսկ համայնքների թիվը անցավ 12000 սահմանագիծը: Այսպես, կարելի է փաստել, որ Գերմանիան ունի եռաստիճան բյուջետային համակարգ: Բյուջետային համակարգի այսպիսի աստիճանավորումը սահմանված է Գերմանիայի սահմանադրությամբ, և գրեթե բոլոր հարկատեսակները որոշակի հարաբերակցությամբ բաժանվում են բոլոր 3 մակարդակի բյուջեների միջև²:

Որպես ֆեդերալ հանրապետություն՝ Գերմանիան անցել է քաղաքական ու տնտեսական զարգացման տարբեր փուլեր, բայց ներկայումս Գերմանիան համարվում է շուկայական տնտեսավարման «մոդել» և օրինակ է աշխարհի շատ զարգացող երկրների, այդ թվում նաև եվրոպական մի շարք երկրների համար:

Ֆեդերալ կառուցվածք ունեցող երկրների համար կարևորագույն խնդիր է կենտրոնական և վարչատարածքային իշխանությունների միջև լիազորությունների բաշխման հարցը: Գերմանիան կարողացել է այս խնդիրը լուծել եկամուտների ուղղահայաց և հորիզոնական համահարթեցման եղանակով, որը ենթադրում է եկամուտների բաշխում և վերաբաշխում ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր մակարդակներում գտնվող բյուջեների միջև:

Գերմանիայի ներկայիս հարկային համակարգի հիմքերը դրվեցին 1969 թ., կատարված ռեֆորմի միջոցով, որի արդյունքում ձևավորվեցին ֆեդերալ, երկրային, և մունիցիպալ կամ համայնքային հարկերը³:

Համայնքային բյուջեի հարկային մուտքերը կազմված են առևտրային և հողի հարկերից: Ի տարբերություն ֆեդերալ և երկրային բյուջեներ մուտքագրվող հարկերի՝ համայնքային բյուջե մուտքագրվող հողի հարկը ամբողջությամբ մնում է համայնքային բյուջեներում և չի բաշխվում ֆեդերալ և երկրային բյուջեներին:

Ֆեդերալ հարկերի մասին օրենսդրությունը, որը սահմանում է ֆեդերալ, երկրային հարկերը և բաշխման հարաբերակցությունները բյուջեների միջև, ըստ սահմանադրության պետք է ընդունվի Բունդեսրադի կողմից⁴:

Եկամտահարկը Գերմանիայում ամենաբարձր հարկային մուտքեր ապահովող հարկն է: Եկամտահարկի դրույքաչափը պրոգրեսիվ է և տատանվում է 19 - 53 տոկոսի սահմաններում: Եկամտահարկը հաշվարկվում է օրացույցային տարում ստացված եկամուտների նկատմամբ⁵:

Բացի այդ տարվա ընթացքում ստացված եկամուտների 7%-ի չափով սոցիալական ապահովագրության վճար է փոխանցվում համապատասխան արտաբյուջետային հիմնադրամ:

¹ Русакова И. Г., В. А. Раевский, Налоги в развитых странах, Москва, 1991, «Финансы и статистика», стр. 212.

² Нлоговые системы стран дальнего и ближнего зарубежья: /Мыровой опыт/, Вестник ВХС, РБ, 2005, №9 стр. 80.

³ www.deutschtax.de

⁴ Мещерякова О.В., Налоговые системы развитых стран мира, справочник, Москва: Фонд «Правовая культура», 1995, стр. 71-72.

⁵ Мещерякова О.В., Налоговые системы развитых стран мира, справочник, Москва: Фонд «Правовая культура», 1995, стр. 78.

Եկամտահարկից ստացված մուտքերը բաշխվում են ֆեդերալ բյուջե՝ 42.5%, երկրային բյուջե՝ 42.5%, համայնքային բյուջե՝ 15%:

Գերմանիայի հարկային օրենսդրության համաձայն՝ ֆիզիկական անձանցից գանձվող եկամուտները միավորվում են 7 խմբերում, որոնցից են. եկամուտներ անհատական գործունեությանից, եկամուտներ արտադրական գործունեությունից, վարձու աշխատանքի օգտագործումից եկամուտներ, կապիտալի օգտագործումից եկամուտներ, վարձով տրված գույքից եկամուտներ¹:

Շահութահարկը այն հիմնական հարկն է, որով հարկվում են տնտեսավարող սուբյեկտները: Շահութահարկի դրույքաչափը ձեռնարկությունների և կազմակերպությունների չբաշխված շահույթից շահութահարկի գումարի հաշվարկման համար 45% է, և 36%՝ բաշխվող շահույթից շահութահարկի հաշվարկման համար: Բաշխվող շահույթը տնտեսավարողի շահույթի այն մասն է, որը պետք է վճարվի բաժնետերերին, ներդրողներին, համասեփականատերերին և այլն: Շահութահարկից մուտքերը բաշխվում են 50:50 հարաբերակցությամբ ֆեդերալ և երկրային բյուջեների միջև:

Գերմանիայի հարկային համակարգի ամենացայտուն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ Գերմանիայում ԱԱՀ-ին փոխարինում է առևտրային հարկը, որը իր մուտքերով դեպի ֆեդերալ բյուջե երկրորդն է՝ զիջելով եկամտահարկին: Առևտրային հարկի ընդհանուր դրույքաչափը 15% է, իսկ առևտրային հարկից գանձվող հարկային մուտքերը բաշխվում են ֆեդերալ բյուջե՝ 60%, երկրային բյուջե՝ 35%, համայնքային բյուջե՝ 5%:

Գերմանիայի հարկային համակարգի առանձնահատկություններն ավելի լավ նկարագրելու համար ներկայացնենք 1995-2005թթ. ընկած ժամանակահատվածում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ինչպես ուղղակի և անուղղակի հարկերի գծով, այնպես էլ ըստ առանձին հարկատեսակների:

Գերմանիայում հարկերի և սոցիալական վճարների միջոցով կենտրոնանում է ՀՆԱ-ի 38.8-41.9 տոկոսը: Իսկ զուտ ուղղակի և անուղղակի հարկերի միջոցով միջինը՝ ՀՆԱ-ի 22-25 տոկոսը: Գերմանիայում հարկատեսակներից ամենամեծ մուտքեր ապահովում է աշխատողներից գանձվող եկամտահարկը, որի միջոցով վերաբաշխվում է ՀՆԱ-ի 8.6-10.2 տոկոսը: Եկամտահարկը կազմում է ուղղակի հարկերի 83.4-90 տոկոսը, իսկ ընդհանուր հարկային մուտքերում՝ 37.5-42.6 տոկոսը: Եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշը 1995-2005 թթ. ընթացքում կազմել է 1999, 2000 և 2001 թթ. ընթացքում համապատասխանաբար կազմելով 9.9, 10.2 և 9.9 տոկոս, որոնք կազմում են ուղղակի հարկերի համապատասխանաբար 83.1, 81.6 և 90 տոկոսը, իսկ ընդհանուր հարկային եկամուտներում եկամտահարկը 1999, 2000 և 2001 թթ. կազմել է համապատասխանաբար 40.4, 40.8 և 42.6 տոկոս:

Շահութահարկը Գերմանիայում մեծ մուտքեր չի ապահովում: Ինչպես երևում է աղյուսակից, շահութահարկի միջոցով վերաբաշխվում է ՀՆԱ-ի 0.6 - 1.7 տոկոսը, որը միջինը կազմում է ուղղակի հարկերի 5.6-13.6 տոկոսը, իսկ ընդհանուր հարկային մուտքերում միջինը կազմում է 2.6-6.8 տոկոս: Շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշը 1995-2005 թթ. ընթացքում կազմել է 1999 և 2000 թթ.՝ 1.5 և 1.7 տոկոս, որը կազմում է ուղղակի հարկերի 12.6 և 13.6 տոկոսը, իսկ ընդհանուր հարկային մուտքերում՝ 6.1 և 6.8 տոկոս, համապատասխանաբար 1999 և 2000 թթ.:

Գերմանիայում հարկային մուտքերով 2-րդ հարկատեսակը ԱԱՀ-ն է, որը կոչվում է առևտրային հարկ: ԱԱՀ-ի միջոցով վերաբաշխվում է ՀՆԱ-ի միջինը՝ 6.2-6.8 տոկոսը: ԱԱՀ-ը կազմում է անուղղակի հարկերի միջինը՝ 51.2-54.4 տոկոսը, իսկ ընդհանուր հարկային մուտքերում միջինը՝ 27.8-28 տոկոսը: ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշը

¹ Сашинчев В. В., "Опыт организации налоговых проверок в ФРГ и некоторые проблемы совершенствования процедур налогового контроля в России" Налоговый вестник, М., № 10, 1997, стр 21.

1995-2005 թթ. ընթացքում արձանագրվել է 1999 և 2000 թթ.՝ կազմելով 6.8 տոկոս, որը կազմում է անուղղակի հարկերի 53.9 և 54.4 տոկոսը՝ համապատասխանաբար 1999 և 2000 թթ.:

Այսպիսով, ամփոփելով զարգացած երկրների հարկային համակարգերի վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ այդ երկրների հարկային համակարգերը աչքի են ընկնում մի շարք հարկային արտոնություններով և հարկային մուտքերի՝ ըստ տարբեր մակարդակի բյուջեներում հստակ բաշխվածությամբ:

Հարկերի և պարտադիր սոցիալական վճարների միջոցով կենտրոնացնում է ՀՆԱ-ի միջինը՝ 38-40 տոկոսը: Մեր ուսումնասիրած բոլոր երկրներում ամենամեծ հարկային մուտքեր ապահովող հարկատեսակը աշխատողների եկամուտներից գանձվող եկամտահարկն է, որը կենտրոնացնում է ՀՆԱ-ի միջինը՝ 10-12 տոկոսը: Հարկային մուտքերով 2-րդ տեղում ԱԱՀ-ն է, որը հայտնի է մահ առևտրային հարկ անվամբ:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՀՀ ասպիրանտ

ՎԱՐԿԱՌՈՒԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԱՐԿԵՐԻ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Վարկային պորտֆելի ստուգման ընթացքում չափազանց կարևոր է առավելագույն ճշտությամբ գնահատել վարկառուների ֆինանսական դրությունը: Արդյունքում՝ կարելի է վարկային ներդրումների ճիշտ դասակարգման միջոցով հաշվարկել բանկի հնարավոր կորուստները: Այս խնդիրն իրագործելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել յուրաքանչյուր վարկառուի ֆինանսական դրությունը, ընդ որում տևական ժամանակահատվածի համար:

Վարկառուի ֆինանսական դրության գնահատման չափանիշերն՝ ըստ կարևորության և նշանակության դասվում են 4 խմբի¹.

I խմբում այն չափանիշերն են, որոնք վկայում են վարկառուի անհրավումակության (ֆիզիկական անձանց առումով՝ անգործության), անվճարումակության կամ հնարավոր անվճարումակության առաջացման մասին, դրանք են հետևյալ 6 չափանիշերը.

- անհրավումակ են, այսինքն՝ պետական լիազորված մարմինների կողմից ճանաչված չէ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ չունեցող անձի կողմից իրավունքներ ունենալու կամ պարտավորություններ կրելու ունակությունը (չունի պետական գրանցում) կամ դատարանի կողմից ֆիզիկական անձը ճանաչվել է անգործունակ
- դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սնանկ
- մեկ կամ մի քանի պարտատերերի կողմից հարուցվել է հայց՝ վարկառուին անվճարունակ ճանաչելու կամ պարտքի մարման նպատակով վերջինիս գույքի նկատմամբ դատարանի վճռով բռնագանձում տարածելու վերաբերյալ
- կորցրել են իրենց կապիտալի զգալի մասը՝ գործունեության ընթացքում կամ պատասխանատվության կիրառման հետևանքով կրած վնասի արդյունքում
- պարտավորությունների հանրագումարը զգալիորեն գերազանցում է կապիտալի չափերը

¹ Ա.Անդրասյան «Վարկային գործառնություններ», Երևան, 2003թ.: